ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2023 թվական թիվ 12 -Ա

ՎԱՐԴԱՆ ԿՈԼՅԱՅԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԾԱՔԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իծաքարի հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 18 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Վ.Դանիելյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

Վարդան Կոլյայի Դանիելյանին 2023 թվականի հունվարի 17-ից նշանակել <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իծաքարի հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

16.01.2023

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ